

Դ.

## ՊՐԵՄԻՆ ՄԵԼԱՆՈՒԹԵԱՆ:

Եպրես, կեցցեն քաջ ազգասէր,

Եյդ անունը քեզ է վայել.

Բայց չմռնանք որ մեր խմբին

Մարդիկ պէտք է միարանին.

Ու է վարժապետ թէ տեսչութիւն

Հոգաբարձուք և՝ իշխանութիւն,

Եւ պէտք է որ, անշնչաղ պէտք է

Որ այս բանին մէկը հսկէ:

Ես բազմամեայ փորձառութեամբ

Եյդ գործն անեմ յաջողութեամբ.

Բայց խորհրդիս պէտք է լսէք

Եւ սրբութեամբ ճիշդ կաաարէք:

Վաստայեան աղան թող տայ

Աերածին կէսն տեսչին երբ դայ.

Ուստահանէն իշխանութեան

Գիր տեղայ լաւ վկայութեան,

Իսկ դու, ազնիւ իմ ասդասէն,

Միշտ վարժապետ նայիր գտնել:

Գիտցիր էսպէս միշտ՝ յաւիտեան

Չփակուիր մեր ուսումնարան,

Իսկ փակուելու երկիւղ լինի

Թող ծնողաց հոգար լինի,

ԽՇԱԾՔ կընի:

ԶԵՐԵՒՆ ԳՐԵԿՈՒՆԻՔ ՀԱՅԵՐԵՆ.

Լամ կինի.

Կեցցէ մեր քաջ ախոյեանը,

Երթանք քիչ մ' էլ խորհրդն անը.

Մին մին բաժակ էլ որ պարզենք

Մէկ նոր զպրոց էլ կիանգնենք,

Եւ Վատուծով լաւ կշահուենք \*

(\*) Հաւասարի ազբկւրներէ լած լինելով որ  
քանի մի զիւզիրու Գլորոցաց մէջ, որոց անուն-

## ԱԶԳԱՅԻՆ

Խ Ա Զ Գ Ա Յ Ի Ն Ք.

Վ. Ե. Հայրապետ՝ Հայ մանկուոյ կըր-  
թութեան եւ դաստիարակութեան վր-  
սեմ պաշտօնի մէջ յաւէտ ժիր եւ ար-  
դիւնաւոր հանդիսանալոյ խրախոյս ատ-  
լոյ համար՝ բարեհաճեցաւ Արժ. Խորէն  
Վարդապետ Ստեփանէին եւ Արժ. Վի-  
րեղ Վարդապետ Սրապեանցին չնորհել  
ականակուռ խաչանշան:

Անշուշտ ենք՝ զի յիշեալ Արժ. Հարք  
ինչպէս իւրեանց եկեղեցական պաշտօ-  
ման եւ պարտաւորութեանց՝ նոյնպէս  
դաստիարակչական նուիրական պաշտօ-  
նից եւ աշխատութեանց՝ ինչպէս նաև  
ազգային գրականութեան մէջ միշտ  
անձնանուէր մշակներ եւ արդիւնասէր  
վաստակաւորներ փայլել կծանան խո-  
հեմութեամբ՝ համբերութեամբ եւ ան-  
խոնջ յարատեւութեամբ:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԶԵՐԵՆԱԴՐՈՒԹԻՒՆ.

Արժ. Յարութիւն Վարդապետ Յօ-  
հաննէսեան Ժամօրհնողն Ա. Տաճարիս  
Էջմիածնի, Արժ. Փիլիպպոս Վարդ-

Ները առժամ չիմք միշեր, արժանաւ որ վարժա-  
պետներ ընտրելու և Գլորոցաց զրամազուիները  
ապահովելու նկատմամբ բաւական եղծումներ կը  
լինին՝ յօժարեցանք այս ոտանաւորը հրատարա-  
կել՝ իբրև Նկարագիր ու ուղարկեն և ոչ ընդունաւոր  
հայկական Գլորոցաց գործանէութեան՝ ի զգու-  
շութիւն որոց հարկն է:

Սառ. Խոր.

պետ նաճառեան Առաջնորդն Հայոց Վիճակին Տիգրանակերտի եւ Արժա. Գրիգորիս Վարդապետ Ալեքամբեան Առաջնորդն Հայոց Վիճակին Տարօնոյ ի 14 ն ամսոյս (Ապրիլի) ի Վեհ. Հայրապետէ Եսպիսկոպոս Ճեռնագրեցան:

Ենորհաւորելով յիշեալ Գեր. Հարց նորընկալ բարձր աստիճանը միանգամայն ծանր պաշտօնը, կրարեմաղթեմք ի Տեառնէ տալ կարողութիւն, զօրութիւն եւ արդիւնաւորութիւն յօդուտ եւ ի պարծանս Եկեղեցւոյ եւ Հօտից իւրեանց:

ՓՈԽԱՆՈՐԴԻ ԳԱՆՉԱԿԱՆ.

Արժ. Թագէոս Վարդապետ Տէր. Դանիէլեանց՝ Պանձակու Վիճակին Փոխանորդ կարգեցաւ եւ ներկայ ամսոյս մէջ փութաց երթալ իւր պաշտօնավայրը:

Ն Ո Ւ Է Բ Ք.

Բարեպաշտուհի Մանանայ Տիկին Սիրական-Գորօյեանց Աղեքսանդրապոլեցի՝ եւ Մեծապատիւ Պ. Կարապետ Շապանեան կարնեցի, — որք այսր ի Ս. Էջմիածին յուխտ եւ յերկրպագութիւն եկած էին, — յէսունական ոռութիւն նուիրեցին ի նպաստ Ճեմարանի Մայր Աթոռոյս, որոյ համար ներկայիւս շնորհակալութիւն կյայտն էմբարանի յիշելով յիշեալուաց:

ԳԱԲՐԻԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՅ.

Վրաստանի եւ Խմէրէթի Վիճակին Հայոց Առաջնորդ եւ Գէորգեան Ճեմարանի Վերատեսուչ Գեր. Գաբրիէլ Ա. Արքեպիսկոպոս ի 13 ն ամսոյս ի Տփխիսէ այսր եկաւ.

Ի ԹէջրԱՆէ.

ԽԵՆԴԱԳՐԱ-ԱՆԿԱՆ ԵՐԱՐԱԿ ԱՀԱԳՐԱ:

Անցեալ 27 Նոյեմբերի, երկու հատ իմ զըրածս երգերէն հանգերձ մի նամակաւ յղեցի առ 2եղ, զորս կյուսամ իւր ժամանակին ստացած կլինէք, թէկ Պարսկաքնակ Հայոց վիճակին վերայ մի գանգատանաց բացազանցութիւն է նա Նոյեմ պատուական Արարատ ամսագիրն մեղ հասաւ Յունլ 15 ին. նորա մէջ պարունակող Հայկորդւոյ զրած սրտաշարժ երզը կարդալով՝ շարժեց նա իմ արիւնն ևս, և աչա նորա գիմաց մի երգ զրեցի, բայց ի՞նչ օգուտ որ ժամանակին չի հասնիր և անպիտան մի բան կլինի, այս է մեր վիճակի վերայ ունեցած գանգատներս, ինչպէս 75 թիւ Օգոստ. Արարատ ամսագիրն, որ իմ զըրածս երզը մէջն տպած էիք, մինչ օրս Թէհրանոչ մէկին չի եկած, չդիտեմք ուր է մնացեր, բայց ես Դավիթէտում տեսայ, այս մասին է մեր գանգատն՝ որ ամեն ինչէ զուրկ եմք մնացեր. թէկ Հայք նեղութիւն կրեցին, բայց ամենէն առաւել Պարսկաքնակ Հայքս, ինչպէս որ մեր նախնի պատմէք կվկայեն, այժմ շատ տեղեր կան մեր Հայոցմէ՝ որ մեր նախնի փառքերէն կվայելին, երեւելի վանքեր, ուխտատեղիներ, ուսումնարաններ, առանձնահանութիւններ, հայրենասէր եղբայրներ, ամեն ինչ պահպան է մասնաւութիւններ, բայց բազմաթիւ լինելով ևս կայ մէջներն ազգասէր անձինքներ, հայրենասէր եղբայրներ, ամեն ինչ զիշեցին, ինչ զիշեցին յառաջ կը վարեն, տեսակ տեսակ զբուարաններով երջանիկ 20